



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կողմից 2018 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2018

Բովանդակություն

Նախաբան	3
1. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանի կառուցվածքը ...	4
2. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները.....	6

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2018 թվականի աշխատանքային ծրագրի (այսուհետև՝ Որոշում 1) 12-րդ կետի և արտացոլում է հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշման (այսուհետև՝ Որոշում 2) №1 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանի համապատասխանության գնահատումը հանձնաժողովի Որոշում 2-ով սահմանված լրացուցիչ պահանջներին:

Հանրային կազմակերպությունների գնումների պլանի մոնիթորինգը ներառում է հանրային կազմակերպությունների կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատումը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) 2018 թվականի տարեկան հաստատված բյուջեի (միայն հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով կատարվող գնումների մասով) հիման վրա կազմված և հանձնաժողով ներկայացված գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում:

1. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանի կառուցվածքը

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն՝ համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի Որոշում 2-ով սահմանված լրացուցիչ պահանջների ընկերության պաշտոնական կայքում և ֆինանսների նախարարության գնումների տեղեկագրում հրապարակել է 2018 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանը:

Համաձայն հրապարակված գնումների պլանի, 2018 թվականին ընկերությունը նախատեսում է հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով կատարել 1 061,2 մլն դրամի (առանց ԱԱՀ) գնում, որի վերաբերյալ տվյալներն ըստ գնման առարկայի ներկայացված են աղյուսակ 1-ում:


Աղյուսակ 1

	Գնման առարկա	Գնումների պլանային արժեքը մլն դրամ (առանց ԱԱՀ)	Գնման ուղղության մասնաբաժինը ընդհանուր գնումներում
1	2	3	4
1	Աշխատանք	749,6	70,6%
2	Ապրանք	311,5	29,4%
	Ընդամենը	1 061,2	100%


Գնումները նախատեսվում է իրականացնել երկու ընթացակարգով՝ բաց մրցույթ և գնանշմամբ հարցում: Ըստ գնման ընթացակարգերի պլանավորված գործարքների վերաբերյալ տվյալներն ամփոփված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

№	Գնման ընթացակարգեր	Պլանավորված գնումների քանակը (հատ)	Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)	Գնումների սկզբնական պլանավորված արժեքը, մլն դրամ (առանց ԱԱՀ)	Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (գումարային)	Գնման գործընթացի մեկնարկի ժամկետները (2018թ.)
1	2	3	4	5	6	7
1	Բաց մրցույթ	39	90,7%	1 058,7	99,8%	հունվար-հոկտեմբեր
2	Գնանշմամբ հարցում	4	9,3%	2,4	0,2%	ապրիլ-հունիս
	Ընդամենը	43	100%	1 061,2	100%	



Նկար 1. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)



Նկար 2. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (գումարային)

2. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները

Ընկերության գնումների պլանի մոնիթորինգի արդյունքներից կարելի է փաստել, որ.

1. գնումների պլանը ընկերության պաշտոնական կայքում և ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է հանձնաժողովի Որոշում 2-ով սահմանված ժամկետում,
2. որոշ ապրանքների նկարագրություններ (մասնավորապես՝ բջջային հեռախոս Iphone) պարունակում են հղում կոնկրետ մոդելի, ինչը չի բխում հանձնաժողովի Որոշում 2-ով հաստատված հավելված 2-ի 6-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջից,
3. ընկերության պաշտոնական կայքը հասանելի չէ բոլորին, անհրաժեշտ է ավելացնել կատարվող գնումներին վերաբերվող նոր առանձին բաժին կամ գործող կայքը առավել հասանելի դարձնել:

Հղումներ

- Որոշում 1. Հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N°540L որոշում,
- Որոշում 2. Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի «Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու, այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի N°61Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N°391Ա որոշում:

